agricultural alliance

Գյուղատնտեսական դաշինք

ԲԱՐԵԼԱՎԵԼՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ԿՅԱՆՔԸ

Դաշինքը հիմնադրվել է 2011 թվականին՝ որպես շահագրգիռ կազմակերպությունների կողմից կամավորության սկզբունքով ձևավորված ազգային բաց հարթակ, որը նպատակ ունի գյուղատնտեսության ոլորտում ձևավորել համատեղ գործընկերություն, հանդես գալ նախաձեռնություններով և աշխատանք իրականացնել գյուղատնտեսության ոլորտում:

Դաշինքը միավորում է գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող 20 միջազգային և տեղական կազմակերպություններ:

Դաշինքի անդամները հուշագրով համաձայնության եկան հետևյալի շուրջ՝

- Գտնել գործուն մեխանիզմներ և համատեղել գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված մարդկային ու ֆինանսական ռեսուրսները:
- Կազմակերպել համատեղ լոբբինգ և շահերի պաշտպանություն երկրի գյուղատնտեսական քաղաքականության մշակման գործում:
- Իրականացնել տեղեկատվության և փորձի փոխանակում:

Համագործակություն պետական կառույցների հետ.

2013 թ.-ին Գյուղ. նախարարության

և Դաշինքի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր,

որի նպատակն է համագործակցության շրջանակ ապահովել և համատեղ քայլեր ձեռնարկել՝ ուղղված գյուղատնտեսական ոլորտում առկա խնդիրների լուծմանը

ANI PLAZA HOTEL
ANI PLAZA HOTEL
ANI PLAZA HOTEL
ANI PLAZA HOTEL
ANI PLAZA HOTEL
ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍ
արտահանում
շուկա
վերամշակում
Andrea
Baggioli
Մարգարիտա
Հակոբյան
Գառնիկ
Պետրոսյան

«Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն»

Ծրագրի հիմնական նպատակն էր *նպաստել Հայաստանում գյուղատնտեսության կայուն զարգացմանը՝*

ագրարային քաղաքականության բարելավման միջոցով:

Մեդիա արշավներ

Դաշինքի նախաձեռնությամբ տեղի են ունեցել մեդիա արշավներ հնարավորություն ստեղծելով լրագրողների համար այցելել Հայաստանի հեռավոր համայնքներ, համայնքի ներկայացուցիչներից, ֆերմերներից լսել իրենց խնդիրների և նվաճումների մասին, ինչպես նաև անձամբ դառնալ վերամշակման գործընթացի ականատեսը:

CHECK BEAR

Գյուղատնտեսական դաշինքի փորձագետները, ովքեր գյուղատնտեսական տարբեր նեղ ոլորտային մասնագետներ են, այցելությունից հետո պատասխանեցին լրագրողների հարցերին, ներկայացրեցին ոլորտի իրավիճակը և այն բարելավելու առաջարկներ արեցին: Գյուղատնտեսական դաշինքն առանձնացրել էր 4 հիմնական թեմաներ.

- գյուղատնտեսական կոոպերատիվներ
- գյուղատնտեսական վարկեր
- գյուղատնտեսական ապահովագրություն
- պետական աջակցության ծրագրեր

agricultural alliance
ԲԱՐԵԼԱՎԵԼՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՅԱՆՔԸ

«Գյուղմթերքի կին հերոս»